

Ձկատարումն Շմաւոնի գեղեցիկ գովութեամբ արձանագրէ Հեգիսիպոս հաւատարիմ օրինակազիր ոչ ինչ հեւի ժամանակաւ : Եւեթէ . Պար . Եկեղ . Գ . 32 :

Յետ նահատակութեան սորա յաջորդեաց յԱթոռն Երուսաղէմի Յուստոս : Ի ձեռագիրս ինչ ասի թէ սորա արարեալ իցէ զօրհնութիւնն Եկեղեցոյ Խաչի եւ Մատաղի , սակայն բանքն ընծային Վանականի : Զկնի սորա Զաքէոս , Տուրիաս , Իէնիամին , Յովհաննէս , Մատաթիա , Փիլիպպոս , Ենեկաս . Յուստոս Բ . Ղեւի , Եփրեմ , Յովսէփ եւ Յուգայ մի զկնի միւսոյ յաջորդեցին յաթոռն Երուսաղէմի . զժամանակս եւ զթիւ ամաց եպիսկոպոսացն Երուսաղէմի չգտանէ Եւսերի աւանդեալ 'ի դիրս ուրեք , այլ միայն թէ սակաւ ժամանակս կացեալ են 15 Եպիսկոպոսունք՝ ամենեքեան Երրայեցիք մինչեւ 'ի սլաշարումն Ագրիանոսի . զի 'ի ժամանակին յայնմիկ նոքա ընարէին զարժանաւորս յայն աթոռ . որոյ վախճանն ետ սպստամբութիւնն եւ կոտորումն Հրէից 'ի Հռովմայեցոյ , որպէս տեսցի արդ :

Յութ եւ տասներորդ ամի ինքնակալութեանն Տրայիանոսի մնացորդք Հրէիցն , որ 'ի Պաղեստին , սպստամբեցին 'ի Հռովմայեցոյ , մանաւանդ յԱփրիկէ ե յԵգիպտոս , որոց առաջնորդէր Ղուկիս ոմն (115) . աւաքեցաւ յինքնակալէն բազում զօրօք Մարկիոս Տուրքոյ , ե նուաճեաց զնոսս յԵգիպտոս բազում սպտերազմաւ , ե հատոյց նոցա զչարիսն տոկոսեօք : Եւ Ղուկիոս կաաւոս սուր եղեալ կոտորեաց զբազումս 'ի Հրէից , որք բնակեալ էին 'ի Միջագետս , զի մի գաղանացեալ 'ի վերայ բնակչացն աւերեսցեն զաշխարհն , ե վասն այսր քաջութեան եկաց դատաւոր Հրէաստանի Յետ մահուն Տրայիանոսի թագաւորեաց Ագրիանոս , ե եղ շինել զԵրուսաղէմ զկնի 47 ամի աւերածոյն 'ի Տիտոսէ , զի քանդեալ էր քաղաքն եւ աւերեալ Տաճարն , ե սակաւ ինչ տունք մնացեալ 'ի կողմն Սիօնի . ե փոքր եկեղեցին ուր Առաքեալքն ժողովեցան յետ Համբարձմանն , այսինքն է Վերնատունն , ե 7 ժողովրդանոցն . ե այլ ոչինչ : Եւ կոչեաց զնա Ելէա (ըստ աւելի անուանն , զի անուանէր Ելիոս Ագրիանոս , եւ ետ կանդնել անդէն մեհեան կապիտոլեանն Արամազդայ 'ի վերայ աւերակաց Տա-